«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 667-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«——» «————————»2020թվականի№----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹ ՅԱՆԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018ԹՎԱԿԱՆԻՀՈՒՆԻՍԻ8-Ի №667-ԼՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի34-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությանկառավարությունը որոշումէ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» N 667-L որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

- 1) 30-րդ կետում «նախարարական կոմիտեի նիստում» բառերից հետո լրացնել հետևյալ նախադասությունները՝

«Նախանիստը, նիստը վարողի նախաձեռնությամբ, կարող է անցկացվելնաև հեռավար՝առցանց ռեժիմով: Հեռավար նիստերը անցկացվում են առցանց հարթակի միջոցով՝ ապահովելով նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց հասանելիությունը, տեսակապը և նիստի արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ այլ տեխնիկական հնարավորություններ:»:

- 2) լրացնել 45.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«45.1. Կոմիտեի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար՝ առցանց ռեժիմով: Հեռավար նիստերը անցկացվում են առցանց հարթակի միջոցով՝ ապահովելով նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց հասանելիությունը, տեսակապը և նիստի արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ այլ տեխնիկական հնարավորություններ:»:

- 3) 65-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ՝ «Վարչապետի հանձնարարությամբ նիստը կարող է անցկացվել նաև հեռավար՝ առցանց ռեժիմով: Հեռավար նիստերը անցկացվում են առցանց հարթակի միջոցով՝ ապահովելով Կառավարության անդամների և Կառավարության նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցհասանելիությունը, տեսակապը և նիստի արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ այլ տեխնիկական հնարավորություններ:»:

2. Վարչապետի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ապահովել սույն որոշմամբ սահմանված նիստերի հեռավար անցկացման տեխնիկական հնարավորությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: